

Բողոքի ակցիա

Մայիսի 8-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ընկերությունը դիմել էր Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ էլեկտրգիայի սակագնի վերանայման հայտով:

ՀԷՑ-ն առաջարկում է էլեկտրգիայի սակագինը բնակչության համար բարձրացնել 17 դրամով:

Մայիսի 25-ին ի նշան բողոքի 2 ժամ տանը բոլոր էլեկտրական սարքերն անջատելու եւ մթության մեջ

անցկացնելու ակցիայի նախաձեռնողը արաբագետ Արայիկ Հարությունյանն է, ով մեզ հետ զրույցում ասաց.

«Անկեղծ ասած՝ ես շատ զարմացած եմ այդ ակցիայի շուրջ ձեռնարկված հետաքրքրությունից. չէի սպասում, որ նման արձագանքի կարծանանա: Կարծում եմ՝ բերած բոլոր հիմնավորումներն անօրինական են, եւ պետք է այդ բոլոր հարցերը լուծվեն ՀԷՑ-ի հաշիվին, ոչ թե բնակիչներին: Եթե նայենք այդ կորուստների ու ծախսերի բովանդակությանը, կհասկանանք, որ Հայաստանի ֆաղափացիները դրանում ոչ մի մեղավորություն չունեն եւ դա չպետք է դրվի սովորական ֆաղափացու ուսերին: Մեր բնակչությունն ի վիճակի չէ այդպիսի հսկայական գումարներ վճարել էլեկտրգիայի համար: Ինչպես եղավ գազի գնի թանկացման դեպքում, երբ սակագնի բարձրացման հետ մեկտեղ՝ կտրուկ անկում ապրեց նաեւ սպառումը, այնպես էլ լինելու է էլեկտրգիայի դեպքում, եւ այդ թանկացումը հարց չի լուծելու: Այսինքն՝ մի տարի հետո, երբ սպառումն ընկնի, այդ նույն ՀԷՑ-ը կարող է նորից հայտ ներկայացնել՝ առաջարկելով նորից գները բարձրացնել:

Արայիկ Հարությունյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր նաեւ, որ ակցիայի շրջանակում տեղի է ունենալու մի շատ հետաքրքիր իրադարձություն, որն ավելի ազդեցիկ է դարձնելու այն: Երբ հետաքրքրվեցինք, թե ի՞նչ իրադարձության մասին է խոսքը, ասաց, որ չի կարող մանրամասնել. անակնկալ է. «Միայն կարող եմ ասել, որ հանրային արձագանքն ավելի մեծացնելու համար ես գրուցեցի հայկական մի շարք խոսքեր կայքերի ներկայացուցիչներին ու ղեկավարներին հետ, եւ ի զարմանս ինձ՝ նրանք որոշեցին աջակցել այդ ակցիային: Հիմա դեռ ժամանակ ունենք իրազեկման համար, եւ ես համոզված եմ, որ ակցիային հազարավոր մարդիկ են մասնակցելու: Եթե ակցիային մասնակցի 10 հոգի, կնշանակի՝ այդ 10 հոգին խնդիրներ են ստեղծել, իսկ եթե հազարներ մասնակցեն, ուրեմն՝ խնդիրը շատ ավելի մեծ կլինի, եւ դրան պետք է համապատասխան լուծումներ տրվեն: Այդ թանկացումն ընդհանրապես չպետք է լինի, եւ համապատասխան գերատեսչությունը պետք է մերժի այդ հայտը», - նշեց նա:

Երեկվանից էլ սկսվել են էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի ամենօրյա ակցիաները փողոցներում, կանգառներում եւ հանրային տրանսպորտում: Նախաձեռնության անդամներն ամեն օր՝ ժամը 18:00-ից հավաքվելու են Մաշտոցի պուրակում եւ թուրքիկներ են բաժանելու բոլորին՝ կոչ անելով մասնակցել մայիսի 27-ին Ազատության հրապարակում անցկացվելիք բողոքի եւ պահանջի մեծ երթին՝ ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացմանը: տեղի է ունենալու նաեւ իրազեկման ավտոերթ, որի նպատակը ֆաղափացիներին մեծ երթի մասին տեղեկացնելն է: